

ազգին սովորութենէն վեր բաներ սեպուած են . այս բանս վարպետ կերպով մը կը յիշեցընէ մեզի Մտղիկ , երբոր կ'ըսէ Հայկազն | և ոն կայսեր համար թէ էր « Ղաասաձեռն 'ի տուրս և 'ի » բաշխել , ոչ որպէս զհոռում ուղղ , զի » չէ սովորութի հոռումնց առատ լինել , » և ոչ յիւրեանց լեզուն ասի առատ . » այլ նա որդի հայոց էր (Ասլի) . » այս խօսքը լսելով հոռումատեաց մը կ'ուռի , և կը կարծէ որ իրեն պէս կամ իրմէ աւելի պակասաւոր մը գտնալով՝ իր երեսը կը ճերմըկի . բայց մտիկ ընէ վարպետ պատմիչը ինչպէս կը վերջացընէ խօսքը . կ'ըսէ . « Ղա առաւել » քան զհայ առատատուր » էր | և ոն :
 Բայց ես աւելի մեծ և փառաւոր կերպով կ'ուզեմ խօսքս վերջացընել , և շատ երջանիկ կը սեպեմ մեր օրերը՝ որ ազգերնուս ծաղկիլը կը տեսնայ՝ Ղնշահասիրութեամբ ազգասէր անձանց . ուրոնք յիրաւի վեհագոյն գտնուելով քան զիրենց առջինները և ժամանակակիցներէն շատը , ազգին կարօտութիւնը իրենց փափկութենէն վեր դրին . և փոխանակ իրենց քանի մը զաւակաց բաւական ժառանգութիւնը աւելի շատցընելու , հարիւրաւոր զաւակներ ունեցան իրենց կանգնած դպրոցներուն մէջ . փոխանակ քանի մը անձանց փուճ և սուտ երջանկութեան մը պատճառ ըլլալու , ճշմարիտ երջանկութեան պատ-

ճառ եզան շատերու . փոխանակ կուռոյ , նախանձու , մատնութեան , զեղխութեան առիթ արծաթը իրենց կարճ օրերուն ծախելու կամ մատուկին տակ թողու , աւետարանական քանքարնէրուն պէս շահեցուցին դպրոցներով , թողակաւոր վարպետներով , ընկերութիւններով , տպել տուած գրքերով , գործարաններով , և այլն : Ղոնց օրինակը կը յուսանք՝ որ ուրիշներուն ալ վարչամակով ծրարածը բանալ տայ , և ազգին նոր դիւրութիւն մը պարգևէ . կը յուսանք ալ որ անոնց օրինակով իրենցմէ պղտիկներն ալ սորվին թէ ստակը ինչ բանի պէտք է եղեր գործածել . և ամէնքն փափագին ամէն բանէ առաջ կրթութեան համար ծախել . չքաւորներն ալ կրթութեան փափագով վազեն բարերարաց բացած դռներուն : Իսկ այն վսեմախոհ և ազնուամիտ բարերարները և ազգասէրները՝ անտարակոյս ըլլան որ իրենց անունը իրենց նախնի թագաւորներէն ալ վեր պիտի գրուի . իրենց երախտիքը սրտէ սիրտ իջնալով դարէ դար պիտի անցնի . իսկ իրենց վարձքը անկէ պիտի առնուն՝ որ ըսաւ . « Ղնիւ , ծառայ , որ 'ի սակաւուդ հաւատարիմ գտար , 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ . մուտ յուրախութիւն Տեառն քո » :

Տ . Ղ . Ս

Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ե Լ Բ Գ Ր Ի Գ Ո Ր Ի

Ս Ե Գ Տ Ո Յ լ Երանց ընդ գագաթունս օդապար
 Օ Ա ն մ ա հ ու թ ե ա ն հ ա տ ե ա լ յ Երկնից բարձր հրաւեր
 Ս կ ե ղ ի ն օ ք թ ու լ յ ե ա լ թ և օ ք գ այ ք ը ն ա ր
 Ի մ ջ զ ի շ Եր ը զ ք ա ր այ թ ի ա ղ օ թ կ Եր .
 Ղ ղ ը ը ղ ի ն տ ա ր ե ը ք այ լ ը ն զ այ լ ,
 Ս ար ս ե լ ար ղ ե օ ք թ է խ այ տ ա լ :

Սխմաց ընդ վէմն հակաճառիկ յառնեն ձայնք .
 Ուր լոկ մահուն հովանաւոր անդաճմունք՝
 Ընդ բիւրք ընդ մին վերահրնչին արձագանգք
 Իբր յԱրագած յառաւօտինրս բուրմունք .
 Ընդ ծերպն 'ի դուրս Ներունի
 Իբր ըզվայրացն հայր յայտնի :

Օարթնու խօսնակ գիշերոյն . շունչք իւր սրարզին ,
 Չայն ըզձայնէ առնու գեղգեղ և պարոյր ,
 Սարս 'ի ծործորս նրսեմաստուերս տարածին
 Իբր ոսկեթել առէջք 'ի քօղ սևաթոյր .
 Ի լուէ հաւիկն հեշտախօս
 Դողան աստեղք լուսահոս :

Իսկ 'ի գիտակրն դարաւոր և վրսեմ՝
 Յեց 'ի ճոկան իւր երկնահորդ Ներըն սուրբ ,
 Բան ըզլուսնին ճապուկ ճաճանչս ուղիածեմ՝
 Օհայաստանեօք կռէ զհոգին վառեալ հուրք .
 Գեր քան զարծուին յառեալ շէշտ
 Թևատարածն 'ի հրաժեշտ :

Սվ վսեմութեամբ և արհաւիրք լի գիշեր ,
 Որ զչայրապետն արձանացեալ մենաւոր
 Ընդ մէջ աստեղց և անդրնդոց գիտեցեր ,
 Եւ 'ի լուծիւնս քոյին մատեար քօղաւոր
 Բազել զյետինն 'ի շըրթանց
 Պատգամ ըզհօրն հայկազանց :

Պատկեր պահուն դու անեղի և անժամ ,
 Յորում Բարձրեալն՝ յաւերժութեանց 'ի յեզր էջ
 Ետիճանեալ ընդ զօրութիւնս լուսերամ ,
 Եւ թմբերոց թափուր վըհից յանհուն մէջ
 Ըրձակեալ զաջն 'ի յոջինն՝
 Օերկին ու երկիր որսաց ջինջ :

Իբր ըզկրճեայ բուրգն էր մարմին Ներունւոյն ,
 Ըջն իւր լապտերք աշտարակաց անհողմոց .
 Իսկ ինք Գրիգոր՝ նստեալ 'ի թևըս հոգւոյն
 Ընդ լեռնաւէտ կոհակս ամպէր սիրաբոց .
 Երէզ , Տարօն , Թիւլ , Թորդան ,
 Բիւրք առ նովաւ պարզեցան :

Եւ գեգերեալ շուրջ ըզբնաւին զոր ետես
 Ուր գարշապարքն աշխատասէրք ընթացան ,
 Եւ ուր զանբուն իննամոցն յորդեաց ըզհեղեղս ,
 Յերտաշատայ վըհէն ցանձաւըս Սանեան ,
 Ի նոյն դարձաւ ամփոփեաց
 Օանձն 'ի կատար երկնասլաց :

Խոր հառաչանք վերացուցին ըզշորթունս ,
 Օսաւալեցաւ ծրնունդ սրտին յընդհանուր ,
 Լուսաճաճանչ տարաւ յերկին սուրբ աչկունս ,
 Ի հընոցէ սիրոյն հատաւ շունչ 'ի հուր . . .
 « Լստուած , կեցո՛ղ զհայաստանս . . .
 Եւ անդ եկաց սրտին բան :

Եղեալ ընդ կողմն՝ ուր ելք արփից արևուն
 Յուպ 'ի կրզակ մատուցանէր ալեզարդ ,
 Լանջ յողջախոհ փարէր բազկօք երերուն ,
 Դէմ Լքարչին կայր նախաստեղծն իբր ըզմարդ ,
 Եւ յընդունել կոյս հոգի
 Լալ յաւանդել բարեղի :

Լստուածակառք ընդ ճանապարհս թագուն
 Լուսեղինաց եկեալ դասուց ողջոյն տան ,
 Կէսք 'ի թիկանց և կէսք զոտիւք սրբասուն ,
 Լստուածակիր սուրբ տաճարին նեցուկ կան ,
 Եւ ոչ անդող աներեր
 Կարդան հոգւոյն այն հրաւեր :

Լուծանին կապք . և շունչն մեծ 'ի վեր կոյս
 Իբր ըզՅաղթողն դրժոխոց գործէ եւ .
 Եւ վառ 'ի վառ ծածանին դրօշքն ոսկելոյս
 Օր 'ի յերկնուստ կորզեաց գոլով դեռ յերկրէս .
 Եւ ըզնովաւ պարեն հոծ
 Դասք դասք նովաւ փրկելոց :

Իսկ 'ի ներքուստ հեռուստ յերկրէ խորաձոր
 Որպէս հրաբուխ 'ի գիշերի բոցահատ
 Սարից Սեպհոյ փայլեն կատարք շողաւոր .
 Յոր միանգամ ևս ակնարկեալ Սուրբն անյաղթ՝
 Կոխէ զխորանս Լնմահին
 Հայաստանեայց սէրն 'ի բռին :

Հ . Դ . Մ

ՀՆԱԽՕՍՍՈՒԹԻՒՆ

Հոռվայրու ամփիթեաբունը :

ՀՈՌՎԱՅՐՈՒ Հին շէնքերուն մէջ
 աս ամփիթեատրոնէն վսեմը չկայ :
 Հին ատեն աս շէնքը Փլաբեան ամփի-
 թեատրոն կ'ըսուէր՝ Սեսպասիանոս և
 Տիտոս կայսերաց անուամբը , որ Փլա-
 բեան ազգատոհմէն էին . հայրը սկը-

սաւ շինել , որդին լամբնցուց Վրիս-
 տոսի 76 թուականին՝ Երուսաղեմէն
 բերած հրեայ գերիները աշխատեցընե-
 լով , որ հինգ տարուան մէջ լամբնցուցին :
 Դրտուանց աշտարակի մը կը նմանի ,
 ու 150 ոտնաչափ բարձրութիւն ու-
 նի , բայց շէնքին չորս կողմը դիզուած
 հողուն պատճառաւ աւելի ցած կ'երև-
 նայ : Իրէք յարկ ունի կամարներով շի-
 նած , ու քանդակագործ սիւներով զար-
 դարուած . վարի յարկը դորացի ճար-